

1.4 Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1 Ձրադավաճություն

2000թ. դեկտեմբերի վերջին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության Աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում հաշվառման են կանգնել 177.3 հազ. չզբաղված քաղաքացիներ, որոնց 86.8 տոկոսը ստացել է գործազուրկի կարգավիճակ: Վերջիններիս թվաքանակը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ ավելացել է 0.5 տոկոսով:

2000թ. տարեսկզբից գործազուրկի կարգավիճակ է ստացել 31.9 հազ. մարդ, այդ թվում 1.6 հազարը՝ դեկտեմբերին, հաշվառումից հանվել է 52.9 հազ. մարդ, այդ թվում 18.5 տոկոսը՝ աշխատանքի տեղավորման պատճառով, 0.4 տոկոսը՝ վաղաժամկետ կենսաթոշակի ձևակերպման հետ կապված, մնացածը՝ այլ պատճառներով:

Ձրադավաճության ծառայություն աշխատանքի տեղավորվելու համար դիմողների 0.8 տոկոսը ցանկանում է ստանալ լրացուցիչ աշխատանք, 0.5 տոկոսը կենսաթոշակառուներ են, 10.0 տոկոսը առաջին անգամ աշխատանք փնտրողներ, որից՝ 26.1 տոկոսը բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և հանրակրթական դպրոցների շրջանավարտներ են:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի*, 2000թ. դեկտեմբերին

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը		նրանցից գործազուրկներ			
	ընդամենը, հազ. մարդ	տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ	ընդամենը	այդ թվում՝ կանայք	տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ	
					ընդամենը	այդ թվում՝ կանայք
Ընդամենը	178.8	88.4	153.9	99.5	87.9	88.3
<i>այդ թվում՝</i>						
Արագածոտն	2.3	74.2	1.7	1.0	77.3	71.4
Արարատ	8.5	86.7	6.9	4.4	92.0	89.8
Արմավիր	12.6	80.8	9.8	5.6	77.8	78.9
Գեղարքունիք	10.9	88.6	7.8	4.7	86.7	92.2
Լոռի	24.3	85.6	21.1	13.8	82.1	81.7
Կոտայք	15.3	82.3	11.9	7.4	81.0	80.4
Շիրակ	33.2	93.8	29.3	21.6	91.0	95.2
Սյունիք	15.7	101.3	13.6	8.2	100.0	98.8
Վայոց Ձոր	2.1	87.5	1.8	1.2	90.0	85.7
Տավուշ	5.4	88.5	4.8	2.9	90.6	90.6
Երևան	48.5	88.2	45.2	28.7	90.0	88.3

* ՀՀ սոցիալական ապահովության նախարարության Աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալներով

Քաղաքային բնակավայրերում գործազուրկ բնակչության թվաքանակը կազմել է 145.9 հազ. մարդ, այդ թվում Երևանում՝ 45.2 հազ. մարդ, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ համապատասխանաբար 26.9 և 12.6 հազ.մարդ:

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 64.7 տոկոսը: Վերջիններիս տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում ունի աճելու միտում և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 0.3 տոկոսային կետով:

**Գործազուրկների տարիքային և կրթական կազմի վերաբերյալ տվյալները
2000թ. դեկտեմբերի դրությամբ**

	Գործազուրկների թվաքանակը, տոկոսներով ընդհանուրի նկատմամբ	
	ընդամենը	կանայք
Ընդամենը գործազուրկներ <i>այդ թվում տարեկան.</i>	100	100
մինչև 18	0.8	0.7
18-22	7.5	7.4
22-30	21.3	20.8
30-50	61.4	63.4
50-ից բարձր <i>կրթությամբ.</i>	9.0	7.7
բարձրագույն	12.0	11.4
միջնակարգ մասնագիտական	23.8	23.4
ընդհանուր միջնակարգ	57.4	59.5
թերի միջնակարգ	6.8	5.7

2000թ տարեսկզբից աշխատանքի է տեղավորվել 10557 մարդ, այդ թվում 93.1 տոկոսը՝ գործազուրկներ: Աշխատանքի տեղավորվածների 45.6 տոկոսը աշխատանքի է անցել պետական ձեռնարկություններում և կազմակերպություններում, 38.0 տոկոսը՝ մասնավոր, 0.4 տոկոսը՝ հասարակական և 16.0 տոկոսը՝ սեփականության խառը տիպի ձեռնարկություններում և կազմակերպություններում: Գործազուրկների ընդհանուր թվաքանակից 1.8 հազ. մարդ անցել է մասնագիտական ուսուցում, որից 0.3 հազ. մարդ տեղավորվել է աշխատանքի, այդ թվում 0.1 հազարը՝ 16-30 տարեկան երիտասարդներ են: Մասնագիտական ուսուցում անցածների 73.0 տոկոսը վերապատրաստվել է, իսկ 27.0 տոկոսը բարձրացրել է մասնագիտական որակավորումը: 2000թ. դեկտեմբերին աշխատանքի տեղավորված գործազուրկների 5.1 տոկոսի գործազրկության տևողությունը կազմել է 1-3 ամիս, 8.7 տոկոսինը՝ 3-6 ամիս, 17.6 տոկոսինը՝ 6-12 ամիս, 68.6 տոկոսինը՝ 12 ամիս և ավելի, իսկ աշխատանքի տեղավորման միջին տևողությունը (գործազուրկի կարգավիճակ ստանալու պահից մինչև աշխատանքի տեղավորման պահը) կազմել է 14.4 ամիս և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 1 ամսով: 2000թ. դեկտեմբերին մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 316 չգրադված մարդ: Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան 2000թ., ըստ ամիսների, բնութագրվում է ստորև բերված տվյալներով.

*(ՀՀ սոցիալական ապահովության նախարարության
Աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության
տվյալներով, ամսվա վերջի դրությամբ)*

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Զբաղված քաղաքացիների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով		
		մարդ	տոկոսներով	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ
հունվար	678	297	117.4	121.7
փետրվար	737	279	93.9	138.8
մարտ	907	229	82.1	112.3
ապրիլ	599	345	150.7	132.2
մայիս	598	338	98.0	104.6
հունիս	715	278	82.2	126.4
հուլիս	498	388	139.6	147.0

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Չգբաղված քաղաքացիների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով		
		մարդ	տոկոսներով	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ
օգոստոս	647	291	75.0	141.3
սեպտեմբեր	637	288	99.0	134.0
հոկտեմբեր	608	298	103.5	121.6
նոյեմբեր	615	291	97.7	118.8
դեկտեմբեր	561	316	108.6	124.9

Գործատուների կողմից պաշտոնապես ներկայացված աշխատուժի պահանջարկը առավել մեծ է արդյունաբերության ոլորտում, այն կազմել է ընդհանուր պահանջարկի 26.8 տոկոսը, տրանսպորտի և կապի համակարգում՝ 18.7 տոկոս, տնտեսության այլ ճյուղերում՝ 16.9 տոկոս, մնացած ճյուղերում այն տատանվում է 0.7-ից (վարկավորում և պետական ապահովագրություն) մինչև 14.4 տոկոսի (բնակչոմունալ տնտեսություն և կենցաղապասարկում) սահմաններում: Աշխատանքի շուկայում աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև գոյություն ունի խիստ անհամապատասխանություն: Գործազրկության միջին տևողությունը 2000թ. դեկտեմբերին կազմել է 15.0 ամիս և նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ աճել է 1.7 ամսով:

Նպաստառու գործազուրկների թվաքանակը 2000թ. դեկտեմբերին հանրապետությունում կազմել է 10.9 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3185 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2000թ. դեկտեմբերին կազմել է 10.9 տոկոս և նախորդ ամսվա նկատմամբ՝ նվազել է 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ նվազել է 1.0 տոկոսային կետով:

Ըստ մարզերի, բնակչության տնտեսական ակտիվությունը բնութագրող ցուցանիշները բերված են ստորև.

	Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը ¹		Զբաղվածության մակարդակը ²		Գործազրկության մակարդակը ³	
	2000	1999	2000	1999	2000	1999
Ընդամենը ՀՀ	63.4	63.9	88.3	88.8	11.7	11.2
Արագածոտն	76.8	79.2	97.7	97.5	2.3	2.5
Արարատ	74.8	75.3	94.5	94.6	5.5	5.4
Արմավիր	70.0	71.1	91.3	91.6	8.7	8.4
Գեղարքունիք	71.0	71.9	92.4	92.6	7.6	7.4
Լոռի	61.4	62.0	83.0	82.9	17.0	17.1
Կոտայք	65.9	66.5	89.0	89.2	11.0	10.8
Շիրակ	60.7	61.9	76.7	76.7	23.3	23.3
Սյունիք	67.4	67.8	79.2	80.7	20.8	19.3
Վայոց Ձոր	75.9	74.8	94.8	94.5	5.2	5.5
Տավուշ	72.5	72.8	92.2	92.4	7.8	7.6
Երևան	53.7	53.6	87.8	89.0	12.2	11.0

1. Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը տոկոսներով՝ աշխատանքային ռեսուրսների նկատմամբ:
2. Զբաղված բնակչության թվաքանակը տոկոսներով՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ:
3. Գործազուրկների թվաքանակը տոկոսներով՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ:

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը 1999թ. կազմել է 11.2 տոկոս: Տեղեկատվության աղբյուրը հանդիսանում է Աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունը: «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն, գործազուրկ են համարվում 16 և բարձր տարիքի այն քաղաքացիները, ովքեր չունեն աշխատանք, դիմել են զբաղվածության հանրապետական ծառայություն աշխատանք ստանալու նպատակով և ունեն առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ: Սակայն 1999թ. իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության հիմքում դրվել է Աշխատանքի Միջազգային Կազմակերպության կողմից առաջադրվող գործազրկության ստանդարտ սահմանումը, որի համաձայն գործազուրկ են համարվում բոլոր այն անձիք ովքեր չեն ունեցել աշխատանք, փնտրել են աշխատանք և պատրաստ են եղել անմիջապես անցնել աշխատանքի:

Թեև 1075 տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքները ամբողջությամբ ամփոփված չեն, սակայն ստացված նախնական տվյալները հնարավորություն են տվել գնահատել գործազրկության իրական մակարդակը, որը 1999թ. կազմել է տնտեսապես ակտիվ բնակչության 34.4 տոկոսը:

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 2000թ. հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1452.5 հազ. մարդ, որոնց 88.3 տոկոսը կամ 1283.0 հազ. մարդ զբաղված է տնտեսության մեջ, իսկ 11.7 տոկոսը կամ 169.5 հազ. մարդ կայուն կերպով չի ունեցել աշխատանք, գրանցվել է ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ: Տնտեսապես ակտիվ բնակչության դինամիկան, ըստ 2000թ. եռամսյակների, բերված է ստորև.¹

(միջինը ժամանակաշրջանի համար)

	Տնտեսապես ակտիվ բնակչություն		այդ թվում՝			
	հազ. մարդ	% -ով նախորդ տարվա համապատասխան ժամանակատմամբ	զբաղվածներ		պաշտոնապես գրանցված գործազուրկներ	
			հազ. մարդ	%-ով նախորդ տարվա համապատասխան ժամանակատմամբ	հազ. մարդ	%-ով նախորդ տարվա համապատասխան ժամանակատմամբ
հունվար - մարտ	1470.0	102.2	1292.3	99.8	177.7	122.8
հունվար - հունիս	1467.3	100.9	1289.7	99.3	177.6	113.9
հունվար - սեպտեմբեր	1462.0	100.1	1288.3	98.1	173.7	107.8
հունվար-դեկտեմբեր (նախնական)	1452.5	99.3	1283.0	98.8	169.5	103.2

Ըստ գնահատման, զբաղված բնակչության 72.3 տոկոսը զբաղված է մասնավոր հատվածում, 26.9 տոկոսը՝ պետական հատվածում և կառավարման համակարգում, 0.8 տոկոսը՝ հասարակական և կրոնական կազմակերպություններում ու հիմնադրամներում: Պետական հատվածում և կառավարման համակարգում զբաղվածների տեսակարար կշիռը 2000թ. հունվար-դեկտեմբերին զբաղվածների ընդհանուր թվաքանակում նվազել է 0.5 տոկոսային կետով, իսկ մասնավոր հատվածում զբաղվածներինը ավելացել է 0.7 տոկոսային կետով: Մյուս կողմից պետք է նշել, որ միայն պետական հատվածում զբաղվածների

¹ Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակն իրենից ներկայացնում է զբաղված և պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումար: Զբաղված բնակչության թվաքանակի գնահատումը կատարվել է տնտեսավարող սուբյեկտներից ամսական և եռամսյակային պարբերականությամբ ստացվող պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, ինքնազբաղվածների (ներառյալ գյուղացիական տնտեսություններում զբաղվածները) թվաքանակի՝ ըստ ընտրանքային հետազոտությունների արդյունքների և վարչական (աղմինիստրատիվ) վիճակագրության տվյալների, կատարված հաշվարկների հիման վրա:

թվաքանակը 1999թ. նկատմամբ նվազել է 2.8 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում (առանց ինքնազբաղվածության և գյուղացիական տնտեսությունների) այն նվազել է ընդամենը 0.6 տոկոսով:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության 36.8 տոկոսի կամ 472.1 հազարի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է մոտ 9 հազար սուբյեկտներից ամսական և եռամսյակային պարբերականությամբ ստացվող վիճակագրական հաշվետվությունների հիման վրա: Ցուցակային կազմի աշխատողներից բացի այս սուբյեկտներում համատեղությամբ և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա 2000թ. հունվար-սեպտեմբերին զբաղված է եղել 14.9 հազ. մարդ: Տարեսկզբի համեմատությամբ վերջիններիս թվաքանակն ավելացել է 59.8 տոկոսով, իսկ նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ աճել է 8.8 տոկոսային կետով: Համալրված աշխատատեղերի ընդհանուր թվում արտաքին համատեղողները կազմել են 1.6 %, քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատողները՝ 1.5 %: Համատեղությամբ և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերով աշխատողների տեսակարար կշիռն առավել բարձր է արդյունաբերության (25.5%), կրթության (14.1 %), շինարարության (12.8 %) և առողջապահության (12.1%) ոլորտներում:


2000թ. հունվար-սեպտեմբերին հարկադիր վարչական արձակուրդում են գտնվել վերը նշված սուբյեկտների 54.4 հազար աշխատողներ կամ ողջ անձնակազմի 11.3 տոկոսը: Ընդ որում, 2000թ. հունվար-մարտի նկատմամբ հարկադիր վարչական արձակուրդում գտնվողների տեսակարար կշիռն ավելացել է 3.8, իսկ նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 7.3 տոկոսային կետով: Հարկադիր վարչական արձակուրդում գտնվողների 83.1 տոկոսը կենտրոնացված է արդյունաբերական, 8.8 տոկոսը՝ շինարարական կազմակերպություններում, 3.1 տոկոսը՝ գիտության ոլորտում, 1.5 տոկոսը տրանսպորտի համակարգում, 1.3 տոկոսը՝ կրթության և 2.2 տոկոսը՝ տնտեսության մնացած ճյուղերում:

2000թ. հունվար-սեպտեմբերին նշված կազմակերպություններում աշխատանքի է ընդունվել 31.9 հազ. մարդ, որի 17.6 տոկոսը կամ 5.6 հազ. մարդ նոր ստեղծված աշխատատեղերում: Նոր ստեղծված աշխատատեղերի տեսակարար կշիռը բարձր է շինարարության մեջ (51.8%), արդյունաբերության (26.8%) և սոցիալական ոլորտում (7.1%): Նույն ժամանակաշրջանում աշխատանքից դուրս են եկել 50.0 հազ. մարդ, որոնցից 60.2 տոկոսը՝ սեփական կամքով, 24.6 տոկոսը՝ հաստիքների կրճատման պատճառով և 15.2 տոկոսը՝ այլ պատճառներով: Ընդ որում, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ սեփական կամքով ազատվածների տեսակարար կշիռն ավելացել է 5.5 տոկոսային կետով, իսկ հաստիքների կրճատման պատճառով ազատվածներինը նվազել է 4.7 տոկոսային կետով: Աշխատատեղերի շրջապատույտի գործակիցն ըստ աշխատանքից դուրս գալու բոլոր պատճառների, 2000թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1.3 և 1999թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ մնացել նույն մակարդակի վրա:

Աշխատանքի վիճակագրության գծով տվյալների ստացման աղբյուրներն (ծեռնարկությունների վիճակագրություն և վարչական վիճակագրություն) այսօր բավարար չեն աշխատանքի շուկայում տեղի ունեցող գործընթացների իրական վիճակագրական պատկերը ստանալու համար: Ուստի աշխատուժի ընտրանքային հետազոտությունների իրականացումը թույլ է տալիս ստանալ մանրամասն և փոխկապակցված տեղեկատվություն ինչպես ողջ բնակչության, այնպես էլ նրա տնտեսապես ակտիվ մասի սեռատարիքային կազմի, կրթական մակարդակի, մասնագիտական կազմի վերաբերյալ՝ կիրառելով միջազգային ստանդարտները, ինչպես նաև գնահատել զբաղվածության և գործազրկության իրական չափերը:

1999թ. իրականացվել է աշխատուժի ընտրանքային հետազոտություն տնային տնտեսությունների կենսամակարդակի ընտրանքային հետազոտությամբ ընդգրկված 1075 տնային տնտեսություններում (հանրապետության 11 մարզերի 14 բնակավայրերում): Քանի որ հետազոտության արդյունքներն վերջնական ամփոփված չեն, ուստի բերվում է հետազոտության նախնական ամփոփման արդյունքները: Տեղեկատվությունը ստացվել է անհատական հարցաթերթերի միջոցով, որոնք լրացվել են S/S 16-70 տարեկան յուրաքանչյուր անդամի, ինչպես նաև նշված տարիքային խմբերից մեծ կամ փոքր, բայց աշխատող անդամների համար: Աշխատուժի ընտրանքային հետազոտության հիմքում դրվել է Աշխատանքի Միջազգային Կազմակերպության կողմից առաջադրվող մեթոդաբանությունը, որի համաձայն ողջ բնակչությունը դասակարգվում է երեք խմբի՝ զբաղվածներ, գործազուրկներ և տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն:

Այսպես, ըստ հետազոտության արդյունքների զբաղված բնակչությունը կազմել է տնտեսապես ակտիվ բնակչության 65.6 տոկոսը, ընդ որում կանայք կազմում են զբաղված բնակչության 49.0 տոկոսը, իսկ տղամարդիկ 51.0 տոկոսը: Չբաղված բնակչության կազմում ամենացածր տեսակարար կշիռն ունեն 70 և ավելի տարիք ունեցողները՝ 0.4 տոկոս, զբաղվածության ցածր մակարդակով երկրորդ խմբին են պատկանում 15-19 տարեկանները՝ 0.6 տոկոս, 20-24 և 25-29 տարեկանները կազմում են համապատասխանաբար 6.0 և 6.3 տոկոս, հաջորդ 30-49 տարիքային խմբում նկատվում է կտրուկ աճ և այն տատանվում է 10.0-ից մինչև 19.7 տոկոսի սահմաններում, այնուհետև կրկին նկատվում է նվազման միտում, բացառությամբ 50-54 տարեկանների խումբը՝ 10.8 տոկոս: Հարկ է նշել, որ աշխատուժը հիմնականում դուրս է մղվել 50-ից բարձր տարիքային խմբերից: Չբաղված բնակչության տեսակարար կշիռների տատանումն ըստ սեռատարիքային կազմի բերված է ստորև.



Չբաղվածների 74.4 տոկոսը կազմել են ամուսնացածները, միայնակ/երբեք չամուսնացածները կազմել են 12.9 տոկոս, այրիները՝ 7.2 տոկոս և ամուսնալուծվածները՝ 5.5 տոկոս: Ակնհայտորեն ցածր է կրկնակի զբաղվածություն ունեցողների տեսակարար կշիռը, այն կազմում է զբաղված բնակչության 4.5 տոկոսը: Ուշադրության է արժանի այն փաստը, որ ըստ ամուսնական վիճակի կրկնակի զբաղվածություն ունեցողների 81.6 տոկոսը ամուսնացածներն են, վերջիններիս 52.6 տոկոսը կազմում են տղամարդիկ, իսկ 47.4 տոկոսը

կանայք: Ջբաղված բնակչության կազմում, ըստ կրթական մակարդակի, բարձրագույն կրթություն ունեցողները կազմել են՝ 33.0 տոկոս, միջնակարգ մասնագիտական՝ 34.3 տոկոս, միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ունեցողները՝ համապատասխանաբար 26.3 և 6.4 տոկոս:


Ըստ հետազոտությանը ստացված պատասխանների, որքան էլ զարմանալի է, բայց ամենաբարձր տեսակարար կշիռն արձանագրվել է կրթության ոլորտում՝ 17.4 տոկոս: Բարձր է տեսակարար կշիռը նաև առևտրի, ավտոմեքենաների, կենցաղային ապրանքների և անձնական օգտագործման իրերի նորոգման ոլորտում՝ 15.0 տոկոս, իսկ գյուղատնտեսության, որսորդության, անտառաբուծության մեջ այն կազմել է՝ 14.8 տոկոս:

Հարկ է նշել, որ զբաղված բնակչության միայն 10.8 տոկոսը կենտրոնացված է արդյունաբերության մեջ: Ընդ որում, արդյունաբերության ոլորտից դուրս մղված աշխատուժն իր զբաղվածությունը ապահովում է հիմնականում առևտրի ոլորտում՝ ինքնազբաղվածությամբ:

Աշխատուժի ընտրանքային հետազոտությունը հնարավորություն է տալիս ստանալ զբաղված բնակչության թվաքանակն՝ ըստ զբաղվածության կարգավիճակի: Այսպես, զբաղվածների 74.3 տոկոսը կազմում են վարձու աշխատողները, 24.6 տոկոսը՝ ինքնազբաղվածները, 0.5 տոկոսը՝ գործատուները և 0.6 տոկոսը՝ այլ կարգավիճակ ունեցողները (ընտանեկան ձեռնարկությունում առանց վարձատրության կամ վարձատրության դիմաց աշխատող ընտանիքի անդամներ, կուլեկտիվ ձեռնարկության անդամներ): Ինքնազբաղվածության բարձր տեսակարար կշիռ արձանագրվել է գյուղատնտեսության մեջ (50.2%) և առևտրի ոլորտում (35.6%):

Ջբաղված բնակչության 62.2 տոկոսն աշխատում է լրիվ աշխատանքային օր կամ շաբաթ, 23.8 տոկոսը ոչ լրիվ և 14.0 տոկոսը՝ ավելի քան լրիվ աշխատանքային օր կամ շաբաթ: Ոչ լրիվ աշխատանքային օրվա/շաբաթվա տևողությամբ աշխատող քաղաքացիների 39.3 տոկոսը չի կարողացել գտնել լրիվ աշխատանքային օրվա տևողությամբ աշխատանք, 28.0 տոկոսը աշխատանքային նման ռեժիմի է անցել գործատուի նախաձեռնությամբ, 16.8 տոկոսը չի ցանկացել աշխատել լրիվ օր կամ շաբաթ և 15.9 տոկոսը չունի լրիվ օր աշխատելու հնարավորություն:

Ջբաղվածների թվաքանակն ըստ աշխատանքային օրվա տևողության և ըստ սեռի



Հետազոտությամբ վարձու աշխատողներին տրվել են հարցեր նրանց կատարած աշխատանքի ֆորմալ լինելու առումով: Հետազոտության արդյունքները վկայում են, որ զբաղված վարձու աշխատողների 18.4 տոկոսն աշխատել է բանավոր պայմանավորվածությամբ: Նրանց տեսակարար կշիռն առավել բարձր է մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում՝ 66.7 տոկոս, հաջորդ հորիզոնականը զբաղեցնում է գյուղատնտեսությունը՝ 64.7 տոկոս, շինարարությունում այն կազմել է 50.0 տոկոս և հյուրանոցների ու ռեստորանների համակարգում՝ 33.3 տոկոս, իսկ մնացած ոլորտներում այն տատանվել է 27.2 –ից (վերամշակող արդյունաբերություն) մինչև 6.8 (առողջապահություն և սոցիալական ծառայություններ) տոկոսի սահմաններում: Հետազոտության արդյունքները վկայում են նաև, որ հանրապետությունում զբաղվածության պոռելեմատիկ երևույթներին զուգահեռ, լայն տարածում ունի նաև չգրանցված զբաղվածությունը, որն ավելի մեծ տարածում ունի ինքնազբաղվածների շրջանում: Օրենքով սահմանված կարգով, չգրանցված գործունեություն իրականացնող գործատուների ու ինքնազբաղվածների 56.9 տոկոսը պատկանում է գյուղատնտեսությանը և 30.9 տոկոսը՝ առևտրի ոլորտին:

Տնտեսության մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտներից նրանց տնտեսական ակտիվության, զբաղվածների թվաքանակի, աշխատանքի վարձատրության (ներառյալ խթանող և փոխհատուցող վճարները), աշխատողների և աշխատատեղերի շարժի և աշխատանքի շուկան բնութագրող այլ ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման նպատակով եռամսյակային պարբերականությամբ շարունակվում է ընտրանքային հետազոտության իրականացումը:

2000թ. հունվարի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված 42703 ձեռնարկությունների 98.6 տոկոսը կամ 42090-ը մինչև 100 աշխատող ունեցող ոչ պետական ձեռնարկություններն են:

Հետազոտության մասնակից 2500 ձեռնարկություններից (կամ գլխավոր համակցության 6 տոկոսից) ստացված պատասխանները բաշխվել են ըստ ակտիվության բնույթի հետևյալ կերպ՝ գործում են հարցվածների 13.7 տոկոսը, չեն գործում՝ 71.0 տոկոսը, հասցեի անհամապատասխանություն՝ 14.1 տոկոս և գտնվում են լուծարման փուլում՝ 1.2 տոկոս:

Ստացված արդյունքները գլխավոր համակցության վրա տարածելուց հետո պետական ռեզիստրում գրանցված մինչև 100 աշխատող ունեցող տնտեսավարող 42.1 հազար սուբյեկտներից 2000թ. հունվար- սեպտեմբերին գործել են 20.1 տոկոսը կամ 8.5 հազարը: Գործող սուբյեկտների տեսակարար կշիռը առավել բարձր է առողջապահության և սոցիալական ծառայությունների ոլորտում՝ 82.9%, էներգետիկա, գազ և ջրամատակարարում՝ 39.9%, կրթության՝ 35.7%, հյուրանոցների և ռեստորանների խմբում՝ 30.4%, կոմունալ և սոցիալական այլ ծառայություններ՝ 26.3%, վերամշակող արդյունաբերություն՝ 24.2%, անշարժ գույքի գործառնություններ՝ 20.6%: Մյուս ոլորտները առանձնանում են տնտեսական ակտիվության ցածր աստիճանով: Այստեղ տնտեսական ակտիվության մակարդակը տատանվում է 9.6-ից (գյուղատնտեսություն, որսորդություն և անտառաբուծություն) մինչև 18.5 (շինարարություն) տոկոսի սահմաններում:

Հետազոտությանը մասնակից տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ակտիվությունն ըստ մարզային պատկանելիության ընդհանուր առմամբ բնութագրվում է նույնականությամբ, բացառությամբ Երևան քաղաքի, որտեղ ընտրանքում ներկայացված սուբյեկտներից ըստ ստացված պատասխանների գործող միավորների 39.5%-ը բաժին է ընկնում Երևանին: Ամենացածր տնտեսական ակտիվության մակարդակն արձանագրվել է Վայոց Ձորի մարզում 1.8%, իսկ մնացած մարզերում այն տատանվում է 2.3-ից (Արագածոտն) մինչև 9.7 (Շիրակ) տոկոսի սահմաններում:

Ստացված պատասխաններից պարզվել է, որ ընտրանքում մեծ տեսակարար կշիռ ունեն հատկապես չգործող ձեռնարկությունները: Այդ ցուցանիշը հատկապես բարձր է ք. Երևանում՝ մոտ 50 տոկոս:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Նշված տնտեսավարող սուբյեկտներում աշխատողների թվաքանակի միջին չափը տատանվում է 4.5 (հյուրանոցներ և ռեստորաններ) - 30.4 (առողջապահություն և սոցիալական ծառայություններ) մարդու սահմաններում, հետազոտված ողջ համակցության համար այն կազմել է 13.9 մարդ (գլխավոր համակցության համար այդ ցուցանիշը կազմել է 14.5 մարդ):

Ստացված արդյունքները գլխավոր համակցության վրա տարածելուց հետո զբաղված բնակչության թվաքանակը նշված տնտեսավարող սուբյեկտներում կազմել է 129.8 հազ.մարդ կամ տնտեսության մեջ զբաղվածների(առանց գյուղացիական տնտեսություններում զբաղվածների) 17.6 տոկոսը: Ջբաղված բնակչության թվաքանակը նշված միավորներում զգալիորեն բարձր է վերամշակող արդյունաբերության մեջ՝ 36.2 հազ. մարդ, առևտրի ոլորտում՝ 27.7, առողջապահության և սոցիալական ծառայությունների ոլորտում՝ 17.9, շինարարության մեջ՝ 13.0, կոմունալ, սոցիալական և անհատական այլ ծառայությունների բնագավառում՝ 10.1 հազ.մարդ: Այս ոլորտներում զբաղվածության մակարդակը տատանվում է 27.9 (արդյունաբերություն) 7.8 (կոմունալ, սոցիալական և անհատական այլ ծառայություններ)տոկոսի սահմաններում:

2000թ. հունվար-սեպտեմբերին մինչև 100 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ակտիվության մակարդակը, դրանցում զբաղվածների կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության ոլորտների, բնութագրվում է ստորև բերված տվյալներով.

	Տնտեսավարող սուբ-յեկտների տնտեսական ակտիվության մակարդակը, %-ով գլխավոր համակցության նկատմամբ	Ջբաղված-ների թվաքանակը %-ով ընդամենի նկատմամբ	Մինչև 100 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտների միջին չափը, մարդ
Ընդամենը	20.1	100	13.9
Գյուղատնտեսություն, որսորդ. և անտառաբուծություն	9.6	3.9	19.6
Էներգետիկա, գազ և ջրամատակարարում	39.9	2.4	30.3
Վերամշակող արդյունաբերություն	24.2	27.9	17.7
Շինարարություն	18.5	10.0	30.2
Մեծածախ և մանրածախ առևտուր, կենցաղ. ապրանքների և անձն. օգտագործման առարկաների նորոգում	17.2	21.3	6.0
Հյուրանոցներ և ռեստորաններ	30.4	1.5	4.5
Տրանսպորտ, պահեստային տնտ. և կապ	10.9	3.2	26.2
Անշարժ գույքի գործառնություններ, վարձակալություն և կոմերցիոն գործունեություն	20.6	4.6	11.2
Կրթություն	35.7	3.7	22.3
Առողջապահություն և սոց. ծառայություն	82.9	13.8	30.4
Կոմունալ, սոց. և անհատական այլ ծառայություններ	26.3	7.8	18.8

Պետք է նշել, որ սուբյեկտների տնտեսական ակտիվության մակարդակը ցածր է հատկապես տնտեսության այն ոլորտներում, որտեղ առկա է սեզոնայնության գործոնը: Այդ ոլորտների շարքին կարելի է դասել գյուղատնտեսությունը, տրանսպորտը, առևտուրը և շինարարությունը: Իրականացված հետազոտությունները վկայում են, որ նշված ոլորտներում առանձին եռամսյակներում արձանագրվում է ինչպես տնտեսական ակտիվության, այնպես էլ զբաղվածների թվաքանակի աճ կամ նվազում:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության վիճակագրական գնահատականը 2000թ. հունվար-սեպտեմբերին կատարված ընտրանքային հետազոտության արդյունքների ամփոփման և տարածման արդյունքում կազմել է 1212.0 հազ. մարդ, իսկ շեղումը մինչ ընտրանքային հետազոտությունը վիճակագրական գնահատման (գնահատման մեթոդաբանությունը բերված է հավելվածում) կազմել է 6 տոկոս: